ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար ավտոմեքենաների լվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» մայիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ)

հանձնաժողովի անդամներ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (Գնման պատասխանատու/ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ)

Նիստից բացակայում էր՝

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է, որ 1-ին չափաբաժնի (Ավտոմեքենաների լվացման ծառայություններ) և 2-րդ չափաբաժնի (Ավտոմեքենաների լվացման ծառայություններ) մասով ընթացակարգը

կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ծառայությունների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր կամ պայմանագրեր (գործարք) առկա չեն:

2. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

3. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/04» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

www.armeps.am կայքի էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգում 2022թ.-ի մայիսի 12-ի ժամը 10:00-ի դրությամբ ոչ մի հայտ չի ներկայացվել:

Հանձնաժողովը որոշեց.

- հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ոչ մի հայտ չի ներկայացվել՝ ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն,
- հաստատել «ԴԴ-ԳՀԾՁԲ-22/04» ծածկագրով ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝

_____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան